ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2020թ. սեպտեմբերի 23 –ին ժ. 15^{00} –ին online ռեժիմով տեղի ունենցած թիվ 1 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 23-ը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում: Զեկ.

   Գ. Դեմիրխանյան

2. Խորհրդի հանձնախմբերի կազմավորում: Զեկ.

   Գ. Դեմիրխանյան

3. ընթացիկ հարցեր

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

Գ. Դեմիրխանյանը անդրադարձավ կազմակերպչական որոշ հարցերի, նա ասաց որ ռոտացիա է եղել և խորհրդի կազմում ուսանողների փոփոխությունը նրանց ավարտելու պատճառով անհրաժեշտ էր, առաջարկեց Ա. Գրիգորյանին ընտրել խորհրդի քարտուղար և խորհրդի կազմը ներկայացնել ռեկտորին հաստատման համար: Քվեարկությամբ Ա. Գրիգորյանին ընտրեցին քարտուղար:

ԼՍԵՑԻՆ. – Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գագիկ Դեմիրխանյանը ներկայացրեց Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը, որը նախապես ուղարկված էր խորհրդի անդամներին ծանոթանալու համար։

Լուսինե Ղուլղազարյանը հարցրեց ինչու ծրագրի մեջ ընդգրկված է միայն մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետվությունը։ Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ անցած տարի լսել են ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետվությունը։

Լուսինե Ղուլղազարյանը հարցրեց հաշվետվությունը մեկ տարվա կտրվացքով է թե ոչ։ Գ.Դեմիրխանյանը պատասխանեց, որ մեկ տարվա ցիկլը փակվել է և հերթը հասել է մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնին։ Ամեն նիստում կավելացվեն այն հարցերը և խնդիրները, որոնք առաջանում են և կքննարկվեն խորհրդում։

ՈՐՈՇԵՑԻՆ.- (քվեարկության արդյունքում) Հաստատել աշխատանքային պլանը։

ԼՍԵՑԻՆ. – Խորհրդի հանձնախմբերի կազմավորում։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ Դեմիրխանյանն ասաց, որ խորհուրդը պետք է ունենա երկու հանձնախումբ՝ խորհրդի մեթոդական հանձնախումբ և որակի հանձնախումբ։ Խորհրդի մեթոդական հանձնախումբի մեջ պետք է ընդգրկված լինեն միայն ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի անդամներ։ Պարտադիր կարգով ամբիոնի վարիչները և դեկանը, ու համապատասխանաբար ամբիոններից ներկայացուցիչներ։ Քանի որ Ա. Ղուշչյանը և Ս. Հարությունյանը ֆակուլտետի խորհրդի անդամներ չեն և մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնից են, ապա Լ. Ղուլղազարյանը առաջարկեց Վ. Վարդազարյանին և Գ. Ղուլղազարյանին։ Է. Կոկանյանը ասաց, որ հանձնախմբի անդամ կմնա Ա. Եգանյանը։ Ա. Թադևոսյանը՝ ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնից կմնա Հ. Հարությունյանը, իսկ տեխնոլոգիական կրթության ամբիոնից Ա Սահրադյանն առաջարկեց Տ. Այվազյանին։ Այսպիսով 2020-2021 ուս. տարվա մեթոդական հանձնախմբի կազմն է՝

1. Գ. Դեմիրխանյան
2. Ա. Թադևոսյան
3. Է. Կոկանյան
4. Լ. Ղուլղազարյան
5. Ա. Սահրադյան
6. Տ. Այվազյան
7. Հ. Հարությունյան
8. Հ. Միքայելյան
9. Վ. Վարդազարյան
10. Գ. Ղուլղազարյան

ՈՐՈՇԵՑԻՆ.- (քվեարկության արդյունքում) Հաստատել մեթոդական հանձնախմբի կազմը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Որակի հանձնախմբի հին կազմում ընդգրկված են եղել ամբիոնների ուսումնական որակի պատասխանատուները՝ մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնից Արաքսյա Մկրտչյանը, Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնից Անուշ Դանիելյանը, ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնից Սամվել Ասատրյանը, տեխնոլոգիական կրթության ամբիոնից Սոնա Վարդանյանը։ Ա. Սահրադյանն առաջարկեց հանձնախմբի աշխատանքները կոորդինացնող նշանակել Վ. Խառատյանին։

Բ. Խոդերյանն առաջարկեց, որ որակի հանձնախմբին կանչել խորհրդի նիստին և պահանջել որ տարին երկու անգամ հաշվետվություն տան, քանի որ մենք անհաղորդ ենք մնում նրանց մասնակցած ժողովներից։ Գ. Դեմիրխանյանը ասաց, որ ամբիոնների վարիչները ներկայացնեն իրենց ներկայացուցիչների կատարած աշխատանքը։ Լ. Ղուլղազարյանն ասաց, որ Ա. Մկրտչյանը լավ է աշխատում, նույնն ասաց Է. Կոկանյանն Ա. Դանիելյանի մասին։ Ա. Թադևոսյանն ասաց, որ Ս. Ասատրյանին թողնել հանձնախմբի կազմում,Ա. Սահրադյանն էլ առաջարկեց

հանձնախմբի կազմում թողնել Ս. Վարդանյանին։ Գ. Դեմիրխանյանը դիմեց Վ. Խառատյանին ստանալու համար նրա համաձայնությունը հանձնախմբի աշխատանքները կոորդինացնելու և ժամանակ առ ժամանակ դրանք ներկայացնելու համար։

ՈՐՈՇԵՑԻՆ.- (քվեարկության արդյունքում) Հաստատել որակի հանձնախմբի հետևյալ կազմը՝ Վ. Խառատյան, Ա. Մկրտչյան, Ա. Դանիելյան, Ս. Ասատրյան, Ս. Վարդանյան։

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝ Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝ Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2020թ. Դեկտեմբերի 16 –ին ժ. 16^{00} –ին online ռեժիմով տեղի ունենցած թիվ 2 նիստը:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 23-ը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում: Զեկ. Գ. Դեմիրխանյան
2. Հեռակա բաժնի բակալավրիատի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: Զեկ. Ն. Օրդյան
3. Ընթացիկ հարցեր. Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Երանուհի Խաչիկի Հարությունյանի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի քննարկում և հաստատում:

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

Մեկ րոպե լռությամբ հարգեցինք պատերազմում զոհված ուսանողների և համավարակում մահացածների հիշատակը:

ԼՍԵՑԻՆ. – Ֆակուլտետի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- 1. Գագիկ Դեմիրխանյանը ներկայացրեց Ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը: Նա ասաց, որ անկախ ստեղծված իրավիճակից՝ համավարակը, պատերազմը մենք մեր աշխատանքը չենք ընդհատել, մեր գործունեությունը շարունակել ենք, չնայած դիտվել է որոշակի որակի անկում, դրա հետ մեկտեղ մենք պետք է բովանդակային մասը պահենք: Հաշվետվության տեքստը ուղարկվել է Ձեզ: Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնից

ստացվել են ուղղումներ, որոնք ես արդեն ավելացրել եմ և տեխնոլոգիայի ամբիոնից կստանամ նաև համապատասխան լրացումներ։

2. Ա. Արաբաջյանը հարցրեց, որ որոշ հոդվածներ կրկնվում են տարբեր խմբերում, ինչու է դա այդպես։ Գ. Դեմիրխանյանը պատասխանեց, որ աղյուսակները սարքված են այնպես, որ դրանք ունեն պարզ հատումներ, որովհետև ՀՀ-ում տպվող որոշ ամսագրեր ընդգրկված են Scopus-ում։ Է. Կոկանյանը ևս փաստեց, որ համալսարանում կա ամսագիր, որը Scopus-ում կա։ Կոկանյանն առաջարկեց գիտամեթոդական աշխատանքները մտցնել հաշվետվության մեջ։ Գ. Դեմիրխանյանն ավելացրեց, որ ով հոդված ունի ներբեռնել, գիտական բաժինը ձևաչափը տալիս է և ասում է լրացնել։ Լ. Ղուլղազարանն էլ առաջարկեց լրացնել հոդվածները որ հաշվետվությունն ուղարկել, եթե կա սյունակ։ Ա. Թադևոսյանը ասաց, որ ըստ աղյուսակի ամբիոնում կա 36 աշխատող, բայց հասիքային ունենք 18-ը։ Ա. Սահրադյանը փաստեց, որ իրենք կարիք ունեն նոր սարքավորումների գիտահետազոտական աշխատանները կատարելու համար։ Նա ասաց նաև, որ ցանկալի է երիտասարդ աշխատողներին գործուղել առաջավոր գիտական հաստատություններ։ Գ. Դեմիրխանյանը նշեց, որ կանի ուղղումները և լրացումները։

ՈՐՈՇԵՑԻՆ.-(Քվեարկության արդյունքում) Հաստատել հաշվետվությունը։

ԼՍԵՑԻՆ. – Հեռակա բաժնի բակալավրիատի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Օրդյանը իր ելույթում ասաց, որ հեռակա բաժնի բակալավրիատի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներով 5 ուսանող հեռացման է ներկայացվել։ Այդ ուսանողներն են Հակոբյան Արթուր, Հարությունյան Կառլեն, Մադոյան Ավետիս տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտությունից, Ավետիսյան Հակոբ ինֆորմատիկ երկրորդ կուրս, Մարգարյան Սարգիս (ըստ իր դիմումի) ինֆորմատիկ առաջին կուրս։ Գ. Դեմիրխանյանն էլ ավելացրեց, որ Մաթեմատիկայի մասնագիտությամբ առաջին կուրսի 8 ուսանողից 1-ը ունի պարտք։ 30 ուսանողի ծանուցում ենք ուղարկել, ովքեր ունեն կրեդիտի պարտք կամ

ֆինանսական պարտքեր։Ուսանողներն էլ թևաթափ են։ Անկայուն հավասարակշռության մեջ ենք։ Ն. Օրդյանը փորձեց հուսադրել, որ մյուս կողմից ունենք շատ վերականգնվողներ։ Գ. Դեմիխանյանն հիշեցրեց, որ հունվարից կներմուծվի նաև էլեկտրոնային դասամատյանները։

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն։

Լսեցին - Ընթացիկ հարցեր. Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Երանուհի Խաչիկի Հարությունյանի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը։

Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ՝ Երանուհի Հարությունյանը խոսեց «***Բազմաչափանիշային մոտեցմամբ էլեկտրոնային կրթական ռեսուրսների որակի գնահատման մեթոդիկայի մշակում»*** վերնագրով ատենախոսության թեմայի արդիականության, հետազոտության նպատակի, հետազոտության նորարարության, հետազոտության մեթոդների, խնդիրների մասին։ /Ղեկավարի համաձայնագիրը և հայցորդի հիմնավորումը կցվում են/մասին։

Արտահայտվեցին – Ա. Թադևոսյանը, Գ. Կիրակոսյանը, Ս.Ասատրյանը, Հ.Հարությունյանը։

Որոշեցին.

- Ատենախոսության թեման հաստատել <<***Բազմաչափանիշային մոտեցմամբ էլեկտրոնային կրթական ռեսուրսների որակի գնահատման մեթոդիկայի մշակում*** >> վերնագրով ։
- Ղեկավար նշանակել ամբիոնի մ.գ.թ. դոցենտ Նանա Դավթի Գրիգորյանին, ԺԳ.00.02 <<Դասավանդման և ուսուցման մեթոդիկա /ըստ բնագավառների/>> մասնագիտությամբ։

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝ Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝ Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2021թ. Մարտի 23 –ին ժ. 16^{00} –ին online ռեժիմով տեղի ունենցած թիվ 3 նիստը:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 26-ը:

Օրակարգ

1. Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Զեկ. Ն. Օրդյան

2. Ավարտական աշխատանքների և երկրորդ տարվա մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկ. Ա. Թադևոսյան

Է. Կոկանյան

Լ. Ղուլղազարյան

Ա. Սահրադյան

3. Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության բակալավրիական և մագիստրոսական ուսումնական ծրագրերի մասնակի փոփոխության մասին:

Զեկ. Ա. Սահրադյան

4. Ընթացիկ հարցեր. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Փառանձեմ Համբարձումյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի քննարկման, ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Ղուլղազարյանին ղեկավար նշանակելու և Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռ. Միրզախանյանին միջնորդելու հարցը:

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

Սկզբում լսեցին երկրորդ հարցը։

ԼՍԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների և երկրորդ տարվա մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Է. Կոկանյանը ներկայացրեց մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը ամբիոնում, նա նշեց, որ ընդհանուր առմամբ ընթացքը նորմալ է։ Անհանգստանում է մեկ մագիստրոսի մասին, ում ղեկավարը Գ. Դեմիրխանյանն է։ Մագիստրոսը վերականգնվել է երկրորդ կիսամյակումն ունի հանձնելու քննություններ և այդ պարագայում արդյոք նա կհասցնի թեզը։ Ունենք մագիստրոս, ով պրն Հարությունյանինն է եղել տվել ենք Եգանյանին և բավական լավ աշխատանք է արվել, գուցե բոլորից լավն է։ Նույնը նա ասաց ավարտական աշխատանքների մասին։ Ասաց նաև որ հեռակայում էլ նույն վիճակն է։

Ա. Թադևոսյանը այսպես ներկայացրեց մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը ամբիոնում, կատարված ատեստացիա արդյունքուն առաջին կուրսի մագիստրոսներից 5 ուսանող չի ատեստավորվել, երկրորդ կուրսի մագիստրոսներից բոլորը ատեստավորվել են, չորրորդ կուրսում 4 ուսանող չի ներկայացել ատեստավորման, հեռակա առաջին կուրսի մագիստրոսների մոտ լավ է՝ բոլորը ատեստավորվել են, իսկ երկրորդ կուրսում 7 ուսանող գնալու են վերաատեստավորման, հեռակա բակալավիատի հինգերորդ կուրսում 7 չատեստավորված և 4 չներկայացած կա։ Ապրիլին ներկայացված են վերատեստավորման։ Գ. Դեմիխանյանը հարցրեց, թե ինչ է նշանակում չեն ներկայացել, չեն կապվել online, թե՞ կապ չի եղել։ Լ. Ղուլղազարյանը ներկայացրեց մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը, բակալավր չորրորդ կուրսում բոլորը ներկայացել են ատեստավորման և բոլորը ատեստավորվել են, մագիստրոս

երկրորդ կուրսում մեկ ուսանող՝ Արևշատյան Արևշատը սահմանում է եղել և չէր կապվել ղեկավարի՝ Դավիդովի հետ, Դավիդովը ասաց որ արդեն կապ կա և կկարողանան վերջացնել աշխատանքը, հեռակա բակալավրիատում՝ 5-րդ կուրսում վիճակը բավական լավ է, իսկ հեռակա մագիստրոսների մոտ ընթացքի մեջ է, դեռ աշխատում են։ Ա. Սահրադյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ խնդիր չկա ամբիոնում՝ ոչ էլ բակալավրիատում, հեռակայում նույնպես վիճակը լավ է։

Գ. Դեմիրխանյանը փաստեց, որ պաշտպանությունըկլինի մայիսի երկրորդ կեսին, նախապաշտպանությունը մայիսի սկզբին։ Թեզերի և ավարտական աշխատանքների ձևավորման և ներկայացման որոշակի պահանջներ կան։ Լ. Ղուլղազարյանը հարցրեց, թե այս տարի մագիստրոսական թեզերի գրախոսները դրսից են լինելու թե ոչ։ Գ. Դեմիրխանյանը պատասխանեց, որ տիկին Գևորգյանը կհավաքի և վերջնական որոշում կասի, ամեն դեպքում ներկա պահին փոփոխություն չկա դրա վերաբերյալ։

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն։

ԼՍԵՑԻՆ. – Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Օրդյանը ներկայացրեց այն ուսանողներին ովքեր պարտքեր ունեն՝ մաթեմատիկայի մասնագիտությունից բակալավրիատում Գրիգորյան Էմիլիան պարտք ունի երկու առարկայից, որոնց ընդհանուր կրիդիտները չեն անցնում 12 կրեդիտը և ապրիլին նրան հնարավորությունկտրվի հանձնելու, ինֆորմատիկներից Խաչատրյան Գոռը և Մանուչարյան Գարիկը նույնպես հնարավորություն ունեն հանձնելու, մագիստրատուրայում մեկ ուսանող մաթեմատիկա մասնագիտությունից ուներ մի քանի անբավարար ու մի մասը հանձնել է, իսկ ինֆորմատիկա մասնագիտությունից երկու ուսանող՝ Հայկը և Սոնան ունեն մեկական առարկայից պարտք։ Ֆակուլտետից դուրս մնացին Բաղդասարյան Կարենը (ինֆորմատիկա երրորդ կուրս), ֆիզիկներ Կեսոյան Արսենը, Բարսեղյան

Վարդանը, նրանք եկան և դիմում գրեցին, փաստորեն իրենց դիմումների համաձայն դուրս մնացին և տեխնոլոգիայի մագիստրատուրայից Շալոյան Վարենկան դիմումը ուշ գրեց և ներկայացվեց հեռացման: Գ. Դեմիրխանյանը դիմեց Լ. Ղուլղազարյանի իմանալու համար արդյոք Էմիլիայի ավարտական աշխատանքը նորմալ է, թե ոչ: Լ. Ղուլղազարյանը պատասխանեց, որ նա Ս. Խաչատրյանի մոտ է գրում ավարտական աշխատանքը, աշխատել է և ատեստավորվել: Վերջին ամսվա ընթացքում մի քանի անգամ եղել է համալսարանում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության բակալավրիական և մագիստրոսական ուսումնական ծրագրերի մասնակի փոփոխության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ա. Սահրադյանը ներկայացրեց, որ մեթոդական խորհրդում ընդունել են փոփոխությունները, թռչող ապարատների կառավարման և թռչող տրանզիստորների հետ և Ա. Թադևոսյանի հետ որոշել են վերանայել թե որ ժամերի շրջանակում ներառեն այն ծրագրերում որոնք դասավանդվում են ամբիոններում: Է. Կոկանյանը հետաքրքրվեց, որ տեխնոլոգիա և ձեռնարկչություն բաժին ընդունվելու համար հանձնում են հայոց լեզու և մաթեմատիկա, և որ մաթեմատիկան պետք է լինի պարտադիր: Նա ասաց, որ մնացած հարցերում կողմ է, որ այդ խնդիրը պետք է լինի մի շարք ամբիոնների տեսադաշտում: Ողջունեց այդ նախաձեռնությունը: Ա. Սահրադյանն ավելացրեց, որ իրենք ունեն տիեզերական առարկաների մի համալիր դասընթաց, որը կօգնի անցում կատարել թռչող սարքերին: Նա ասաց նաև, որ իրենք պատրաստ են անօդաչու թռչող սարքերի և ռոբոտատեխնիկայի խմբակներ ղեկավարել, որը կկողմնորոշի աշակերտներին: Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ մեթոդական խորհուրդը նրա համար է, որ որոշի ֆակուլտետի խորհրդում արժե քննարկել այդ հարցը թե ոչ: Այստեղ թիմային աշխատանք է պետք, բոլորս հասկանում ենք, որ դա խնդիր է ինֆորմատիկայի և տեխնիկայի տիրույթում, որովհետև սարքը պետք է ունենա տեխնիկական պարամետրեր: Առարկայական

ծրագիրը և առարկայական նկարագիրը դեռ չկան, մինչև արձակուրդ գնալը պետք է փաթեթը ներկայացնե լշահագրգիռ ամբիոններին և ինստիտուտներին։ Այդ առարկաները ներառված են երկրորդ կիսամյակում, եթե մինչև սեպտեմբեր չհասցրեցինք, ապա ուսումնական պլանը չի հաստատվի։ Հ. Հարությունյանը առաջարկեց Ա. Սահրադյանին իր օգնությունը։ Ա. Թադևոսյանն ասաց, որ տեխնոլոգիական կրթության ամբիոնում կարող են զբաղվել կմախքային մասով, իսկ ծրագրային մասով կզբաղվեն ինֆորմատիկայի ամբիոնում։ Ա. Սահրադյանն ասաց, որ համագործակցության ոլորտում խնդիր չի տեսնում կոնստրուկցիոն մասով, ինժեներական խնդիրներով զբաղվելու են իրենք, իսկ ծրագրավորման հարցերով ինֆորմատիկայի ամբիոնը։

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն։

ԼՍԵՑԻՆ. – Ընթացիկ հարցեր.

Գ. Դեմիխանյանն անդրադարձավ որոշ կազմակերպչական հարցերի, 1. Մեթոդական խորհրդի կազմում մասնակի փոփոխություններին։ Մեթոդական խորհրդի անդամները ֆակուլտետի խորհրդի անդմաներից լինելով նախորդ կազմում կային Ս. Հարությունյանը և Ա. Ղուշչյանը, ռոտացիայի խնդիր կա, և քանի որ երկուսն էլ ՄԴՄ ամբիոնի անդամներ էին և լրացվեն նույն ամբիոնի ֆակուլտետի խորհրդի նորացված անդամներից՝ Վ. Վարդազարյան, Գ. Ղուլղազարյան և Լ. Արաբաջյան ներկայացուցիչներից ընտրել երկուսին։ Լ. Ղուլղազրյանը ներկայացրեց, որ ամբիոնը որոշել է և ընտրել է Լ. Արաբաջյանին և Գ. Ղուլղազարյանին։ 2. Համավարակի խնդիրներին. Դասախոսներից Մինասյան Անժելան և Ենոքյան Անահիտը վարակված են, այդ կապակցությամբ ՄԴՄ ամբիոնը և պրն Միքայելյանի աշխատասենյակը կախտահանեն։ Ի՞նչպես անցկացնենք դասերը հարցին Լ. Ղուլղազրյանն ասաց, որ այն կուրսերը որտեղ դասավանդել է Ենոքյանը՝ մաթեմատիկա երրորդ, ֆիզիկա առաջին և աշխարագրագետները անցել են առցանց ուսուցման։ 3. Գ. Դեմիխանյանը հիշեցրեց ժամանակին լրացնել էլեկտրոնային մատյանները։ 4. Նա հիշեցրեց նաև, որ վաղը մրցույթ է լինելու մաթեմատիկայից, ֆիզիկայից, ինֆորմատիկայից և միջինից

բարձր գիտելիքներ ունեցողներին հնարավորություն կտրվի զեղչով սովորել մեր ֆակուլտետում։

5. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Փառանձեմ Համբարձումյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի քննարկման, ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Ղուլղազարյանին ղեկավար նշանակելու և Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռ. Միրզախանյանին միջնորդելու հարցը։

ՈՐՈՇԵՑԻՆ.- Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռ. Միրզախանյանին միջնորդել մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Փառանձեմ Համբարձումյանի՝ *«Շերտավոր սալերի և թաղանթների ստատիկական և դինամիկական վիճակների ուսումնասիրություն ոչ դասական եզրային պայմանների դեպքում»* (Ա.02.04-Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա) թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիրը հաստատելու համար, և ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Ղուլղազարյանին թեկնածուական ատենախոսության ղեկավար նշանակելու հարցը ուղղարկել ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտ։

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝ Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝ Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2021թ. Հուլիսի 6 –ին ժ. 15^{00} –ին online ռեժիմով տեղի ունենցած թիվ 4 նիստը:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 21-ը:

Օրակարգ

1. Երկրորդ կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում: Զեկ. Ն. Օրդյան

2. 2021 – 2022 ուստարվա ծավալների և դասաբաշխումների մասին:
Զեկ. Ա. Թադևոսյան
Է. Կոկանյան
Լ. Ղուլղազարյան
Ա. Սահրադյան

3. Պետական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների քննարկում:
Զեկ. Գ. Դեմիրխանյան

4. Ընթացիկ հարցեր

ա) Ա. Սահարադյանի և Բ. Խոդերյանի Մեքենաշինության տեխնոլոգիա առարկայի լաբորատոր աշխատանքների ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

բ) Բ. Խոդերյան, Ա. Հարությունյան, Մ.Աղաջանյան Լաբորատոր աշխատանքների ուղեցույց փայտամշակման տեխնոլոգիա առարկայից տպագրության երաշխավորելու հարցը:

գ) Միջնորդել ՀՊՄՀ գիտական խորհրդին Վաղարշակ Ոսկանյանի “Криволинейные (n+1)-ткани на n-мерных многообразиях” (Կորագիծ (n+1)-հյուսվածքներ n – չափանի բազմաձևությունների վրա) վերնագրով մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԼՍԵՑԻՆ. – Ն. Օրդյանը ամփոփեց երկրորդ կիսամյակի քննությունների արդյունքները ըստ բակալավրիատի (1,2,3 կուրս) և ըստ մագիստրատուրայի(1 կուրս)։ Նա նրեկայացրեց նաև շատ պարտքեր ունեցող ուսանողների անունները.

1. Մոսոյան Պետրոս, ԱԲ ֆիզիկա -2 (6 անբավարար II կիսամյակից, 1-ը՝ I կիսամյակից)
2. Խաչատրյան Գոռ, ԱԲ ինֆորմատիկա-2 (6 անբավարար II կիսամյակից /18կրեդիտ/, 2-ը՝ I կիսամյակից/6կրեդիտ/)
3. Կիրակոսյան Մուրադ ԱԲ ինֆորմատիկա-2 (5 անբավարար II կիսամյակից /16կրեդիտ/)
4. Սողիկյան Հրակ ԱԲ ինֆորմատիկա-2 (4 անբավարար II կիսամյակից /14կրեդիտ/)
5. Մանուչարյան Գարիկ ԱԲ ինֆորմատիկա-2 (3 անբավարար II կիսամյակից /7 կրեդիտ/)։2.3.4.5.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանի հարցին, արդյոք հին պարտքերը հանձնելու հնարավորություն ունեցել են թե ոչ, Օրդյանը պատասխանեց, որ մինչև այսօր հանձնելու հնարավորություն կար(մեկ ամսվա մեջ), ոմանք եկել հանձնել են, մնացածը տեղեկացված են եղել և չեն եկել։ Այն հարցին թե հեռակայի վիճակը ինչպես է . Օրդյանը պատասխանեց, որ հեռակայի ամփոփիչ քննությունները օգոստոսին են, դրանից հետո պարզ կլինի։

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն։

ԼՍԵՑԻՆ. – Գ. Դեմիրխանյանը իր ելույթում նշեց, որ 2021 – 2022 ուստարվա բոլոր ծավալները հաստատվել և ուղղարկվել են համապատասխան բաժին, իսկ դասաբաշխումների մասին կներկայացնեն ամբիոնների վարիչները։ Այնուհետև Է. Կոկանյանը իր ելույթում ասաց, որ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում դասաբաշխումները ավարտել են ու անում են վերջնական շտկումներ, կարող է ունենան քառորդ դրյուքաչափի կրճատում։ Գ. Դեմիրխանյանի այն հարցին թե ինչով է պայմանավորված կրճատումը, Է. Կոկանյանը պատասխանեց, որ դա

ուսանողների քանակի կրճատման հետ է կապված, իսկ այլ պրոբլեմներ այդպիսին չկան: Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Լ. Ղուլղազարյանը ասաց որ ընդամենը 50 ժամ է պակասել, կրճատվումներ չեն լինելու, ծավալները հաստատված են: Նա ասաց նաև, որ մեթոդիստի կարիք ունեն: Ընդունելու է մեկ դասախոս և գործնական աշխատանքների համար Փ. Համբարձումյանին (ամբիոնի նախկին գործավարին), և թեկնածությունները հանձայնեցված են: Պրն Ա. Սահրադյանի բացակայության պատճառոմ ամբիոնի դասաբաշխումների մասին ելույթ ունեցավ Ն.Օրդյանը: Ն. Օրդյանը ներկայացրեց, որ ամբիոնիում վիճակը լավ չէ, ուսանողների քանակը կրճատվել է, ծավալները նվազել են, դրա համապատասխան նվազել են նաև դրույքները: Բաշխումները արել են. Բ. Խոդերյանի և Տ. Այվազյանի մեկ դրույքները նվազել են մինչև երեք քառորդ: Եթե առաջին կուրս չլինի, ապա բոլորի դրույքները կնվազեն: Գ. Դեմիրխանյանը առաջարկեց ամբիոններին հնարավորության սահմաններում և օրենքի շրջանակներում օժանդակեն մեկը մյուսին: Վ. Խառատյանը ներկայացրեց ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում բաշխումների հետ կապված իրավիճակը: Ժամերը նվազում են, բաշխումները վերջացրած չեն, այլ ընթացքի մեջ են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Առաջարկներ չեղան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Քննարկման համար Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց Պետական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: Գ. Դեմիրխանյանը փաստեց, որ նախագահների մեծ մասը շոշափելի դիտողություն չեն արել, շատ ընդհանրական մտքեր են ներկայացրել: Մաթեմատիկա մասնագիտության բակալավրիատի 35 ավարտական աշխատանքներից 18-ը գնահատվել են գերազանց, 13-ը՝ լավ, 4-ը՝ բավարար: բողոքարկումներ չեն եղել, անբավարարներ նույնպես: Նախագահը գտնում է, որ ուշադրություն դարձնել այն թեմաներին, որոնց համար մաթեմատիկայի դպրոցական ծրագրում ժամանակը քիչ է: 16 մագիստրոսական թեզերից 13-ը գերազանց են ստացել, մնացածը՝ լավ, եղել է մեկ բողոքարկում, որը բարձրացվել է: Նշվել են մաթեմատիկական վիճակագրության վերաբերյալ աշխատանքները և այն թե ինչպես է մագիստրանտը իրառել այն: Թերություններ հաշվետվության մեջ արձանագրված չեն:

Տեխնոլոգիայի նախագահը՝ պոլիտեխնիկական համալսարանի պրոռեկտորը, կատարել էր հետևյալ դիտարկումը, որ հեռակա բակալավրի շրջանավարտները և հեռակա մագիստրոսները նվազ ծանոթ են ծրագրային փաթեթներին, հետագայում թեզերի և ավարտական աշխատանքներին ավելի լայն կիրառական նշանակություն ունենան:

Ֆիզիկայի ինստիտուտի լաբորաորիայի վարիչը պրն Հարությունյանը իր հաշվետվության մեջ նշել է, որ շրջանավարտների ներկայացրած թեմաները ունեն արդիական նշանակություն և կարևոր են լաբորատոր աշխատանքների հետ կապված դիպլոմային աշխատանքները: Որոշակի դիտողություններ է արել կապված հեռակայի ավարտական աշխատանքների մասին: Նույնը վերաբերում է նաև բնագիտություն մասնագիտությանը: Ինֆորմատիկա մասնագիտության նախագահը միայն գովեստի խոսքեր է գրել, դիտողություններ և առաջարկություններ չկան: Հաշվետվությունները կրում են խիստ ֆորմալ բնույթ, գործնական առաջարկություններ պետք է լինեն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Հ. Միքայելյանը ասաց, որ մաթեմատիկայի նախագահը մաթեմատիկայի շատ լավ մասնագետ է, բայց մեթոդիկայից և մանկավարժությունից արված դիտողությունները և առաջարկությունները կրում են ֆորմալ բնույթ: Դա միայն այս տարվան չի վերաբերվում, մեթոդիկան միշտ տուժել է:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Ընթացիկ հարցեր. ա) Ա. Սահարաղյանի և Բ. Խոդերյանի Մեքենաշինության տեխնոլոգիա առարկայի լաբորատոր աշխատանքների ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ֆ.մ.գ.թ. Ն.Օրդյանը, ֆ.մ.գ.թ., դոցենտ Տ. Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ (Քվեարկության արդյունքում) Երաշխավորել մեթոդական ուղեցույցը տպագրության:

բ) Բ. Խոդերյան, Ա. Հարությունյան, Մ.Աղաջանյան Լաբորատոր աշխատանքների ուղեցույց փայտամշակման տեխնոլոգիա առարկայից տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ֆ.մ.գ.թ. Ն.Օրդյանը, ֆ.մ.գ.թ., դոցենտ Տ. Այվազյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ.- (Քվեարկության արդյունքում) Երաշխավորել մեթոդական ուղեցույցը տպագրության։

գ) Միջնորդել ՀՊՄՀ գիտական խորհրդին Վաղարշակ Ոսկանյանի “Криволинейные (n+1)-ткани на n-мерных многообразиях” (Կորագիծ (n+1)-հյուսվածքներ n – չափանի բազմաձևությունների վրա) վերնագրով մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ֆ. մ. գ. դ., պրոֆեսոր Լ. Ղուլղազարյանը, ֆ. մ. գ. դ., պրոֆեսոր Գ. Դեմիրխանյանը, ֆ. մ. գ. դ., պրոֆեսոր Ս. Հարությունյանը, մ. գ. դ., պրոֆեսոր Հ. Միքայելյանը, ֆ.մ. գ. թ., դոցենտ Վ. Վարդազարյանը, ֆ. մ.գ. դ., պրոֆեսոր Գ. Ղուլղազարյանը, ֆ.մ.գ.թ.,դոցենտ Տ. Այվազյանը և ուրիշներ։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակը կատարել է մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստում արված դիտողություններից մասնակի փոփոխություն մենագրության մեջ ուղղորդել ՀՊՄՀ գիտական խորհրդին Վաղարշակ Ոսկանյանի “Криволинейные (n+1)-ткани на n-мерных многообразиях” (Կորագիծ (n+1)-հյուսվածքներ n – չափանի բազմաձևությունների վրա) վերնագրով մենագրությունը տպագրության երաշխավորելու համար։

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝ Ս.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝ Ա.Հ. Գրիգորյան